



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**


Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material



1999

Ա. Ալբարեզի



Հոհուսուհ Կ. Հ. Զ. Ա.



ՄՈՍԿՈՒ

ՏՊԱՐԱՆ Ա. ԲԱՐԵՎԱՆԻ ԳՐԱԴԱՐԱՆ

1892

(48)

Լեն
98


Ճիրիս

Ա. ԱՐՄԱՐԵՑԻ

839.7-3

բանահանություն

ԳՈՒՍՏԱԿ ՎԱԶԱ



ՄՈՍԿՈՎԻ

ՏՊԱՐԱՆ ՄԿՐՏԻՉ ՅԱՐԱՀԱԴԱՐԵԱՆԻ

1892

(48)

ԱՅՍԻ ԱՇԱԼՈՐ

Дозволено цензурою. С.-Петербургъ, 17 Апрѣля 1892 года.

Тип. М. Бархударянъ, Москва, Мясницкая, д. насл. Анапова.

498-60

28. 103

ԳՈՒՅԱԿԱՆ ՎԱԶԱ

I.



Երոպայի հիւսիսային թերակղզիներից մեկի վրայ գտնւում է Դանիացոց թագաւորութիւնը:
Տան ու վեցերորդ դարու սկզբում Դանիայի թագաւորն էր Քրիստիան II-ը: Այդ թագաւորը յայնի էր իր անդութեածան բնաւորութիւնով. նա իր հպատակների հետ վարւում էր շատ անխիղձ կերպով. նայա, որոնք չեն հպատակւում նորա կամքին, պատժում էր առանց դատասանի, չեր սիրում, որ նորա դեմ խօսեին. մի խօսքով, այնպիսի մարդ էր, որ չըր կարողանում ապրել հանդիսա

ՕՀ - ՀՀ

չեր բառականանում նրանով ինչ որ թողել
էր նորան իր հայրը իբրև ժառանգութիւն:

Դահ բարձրանալուց առաջ, հայրը ուղարկել էր նորան Նորւեզիայ զսպելու այնտեղի ժողովրդին, որը ապատամբւել էր դանիացիների գէմ: Թէև Նորւեզիան մի գաշնակցութեամբ, որը կայացել էր Քրիստիանից 100 տարի առաջ հպատակւել էր Դանիային, բայց ժողովուրդը գոհ չէր իր դրութիւնից և մտածում էր մի կերպ ազատւել Դանիացոց ծանր լուծից: Քրիստիանը Նորւեզիայում իրան շատ վատ էր պահում, ձնչում էր ժողովրդին, բանտարկութիւնների էր ենթարկում բարձր դասի պատկանող ժողովրդին, յարձակումներ էր գործում Նորւեզիայի խաղաղ զիւղերի վրայ, կողապատում էր ժողովուրդին, աքսոր ուղարկում...:

Դահ բարձրանալով, նա պահպանեց իր խրստափրտ բնաւորութիւնը. նորա առաջի գործը եղաւ հպատակեցնել իրան հարեւան Շւեդիային: 100 տարի էր, որ Շւեդիան գտնուում էր Դանիացոց հպատակութեան տակ. սրանք դժուարութեամբ էին տանում Դանիացոց ծանր լու-

ծը, շատ անգամ փորձել էին ազատութիւն ձեռք բերել, որի համար մի քանի անգամ պատերազմել էին Դանիացոց հետ, բայց Դանիացիք միշտ նրանց զսպում էին: Քրիստիան II-ը, դահ նստելու օրից, վճռեց բոլորովին ոչնչացնել նրանց: Մեծ զօլքով մօտեցաւ Շւեդիայի մայրաքաղաքին՝ այն է Ստոկհոլմին և պաշարեց այդ քաղաքը: Պատերազմը սկսւեց: Բայց Շւեդներն էլ իրանց կողմից վճռեցին պաշտպանուել մինչև վերջին շունչը. հաւաքեցին իրանց բոլոր ոյժերը, զինուորւեցին, ով ինչով կարողացաւ:

Ժողովրդը զիւղերից հաւաքւում էր, գունդ դունդ կազմուում էին խմբեր, որոնք աշխատում էին փոքրիկ յարձակումներով թուլացնել թրշնամինների ոյժը, պաշար էին խլում, կրակ էին տալիս զիւղերը, որտեղեց պիտի անցնէին Դանիացիք... Նրանք քաջութեամբ պատերազմում էին հայրենիքի ազատութեան համար: Նրանց բոլոր երիտասարդները կուում էին մինչև արեան վերջին կաթիլը:

Այս կորովի երիտասարդների մէջ աչքի էր

ընկնում մի երիտասարդ Շւեղիայի դրօշակակիր,
որը պատերազմի ժամանակ առաջի կարգերումն
էր և գերազանցում էր բոլորին իր քաջու-
թեամբ. նորա անունն էր Գուստավ Վաղա:
Շւեղները սկսեցին յաղթել: Քրիստիանը կամե-
ցաւ տեսնել Շւեղիայոց գլխաւորների հետ և
իր ապահովութեան համար վերցրեց հինգ երի-
տասարդ Շւեղներ, իբրև պատանդ:

Երբ պատանդները նորա մօտ էին, յանկարծ
նո դադարեցրեց իր յարաբերութիւնը թշնա-
միների հետ և շուտով հեռացաւ Ստոկհոլմից,
գնաց Դանիա և պատանդ Շւեղներին էլ տա-
րաւ իր հետ:

Երկու տարուց յետոյ Քրիստիանը նորից հա-
ւաքեց մեծ զօրք. միացրեց նրանց հետ և բոլոր
վարձկաններին, որոնք հաւաքւել էին Դանիա
և սկսեց իր երկրորդ արշաւանքը: Դանիայոց
առաջին արշաւանքից ուժամապառ դարձած,
Շւեղները չկարողացան ընդդիմանալ իրանց
թշնամիներին. նոքա չ'ունէին ոչ նիւթական մի-
ջոցներ, ոչ մարդիկ և ոչ զօրք: Այս անգամ
բաղդր դաւաճանեց Շւեղներին. նրանք յաղ-

թւեցին: Անզէն, անուս Շւեղները չկարողացան
ընդդիմանալ Դանիայոց ահազին զօրքի դէմ
և, յաղթեած, հարկադրւած էին հպատակւել
նրանց առ այժմ: Քրիստիանը ստիպեց նրանց
ստորագրել խաղաղութեան պայմանը, ձանաչել
իրան իբրև թագաւոր, խոստանալով մոռանալ
այն բոլորը, ինչ որ եղել էր առաջ:

Բայց դաժան բռնաւորը չ'մոռացաւ ապս-
տամբ Շւեղներին և վճռեց սաստիկ վրէժ առնել:

Վերադառնալով Դանիա, նա հրամայեց բռ-
նել Շւեղիայի բոլոր երեւելի անձերին—20 հողի
իշխանական ցեղից, երկու եպիսկոպոս և 25
յայտնի ու յարդելի մարդկանց, բռնել տալով
այդ բոլորին, ահազին ամբոխի ներկայութեամբ
մահի դատապարտեց նրանց:

Դրանցից յետոյ հերթը հասաւ ուրիշներին,
այն է արշեստաւորներին ու բանւորներին, ո-
րոնց հեռացնում էին զործից և տանում սպա-
նում: Մահից առաջ թոյլ չեին տալիս անդամ
աղօթել հաղորդւել:

Սարսափելի զէպքեր էին պատահում այդ
ժամանակ. ծերերին, ընտանիքների մայրերին

քաշում էին հրապարակ. երեխայք, կանայքը
մնում էին անպաշտպան առանց մի կտոր հայի:
Դանիացիների զինւորները կողոպտում, յափշ-
տակում էին տներից տան կարասիքը... Պա-
տահում էր, որ ձմռանը, ստոնամանիքի ժա-
մանակ մանուկներին խլում էին մօր զրկից և
ձգում դուրս. կողպում էին տները, թոյլ չեին
տալիս ոչ ոքի տուն մանել, մինչև տանտերը
մի որոշ գումար չեր տալիս նրանց... Ո՞ւմ
զիմէն, ումից արդարադատութիւն ինզրէին:
Ինքը կառավարութիւնը թոյլ էր տալիս անել
այդ ապօրինի բաները. Մինչև անգամ իրանք
Դանիացիք իրանց թագաւորի այդպիսի վար-
մունքին զզուանքով էին նայում: Քրիստիանը
ինքը գնոց նւեղիայ և ամեն տեղ հրամայում
էր դնիլ կախաղաններ և կախել նւեղիներին:

Եցտ տարում մահուան գատապարտւեցին
600 հոգի: Ծեծում էր չարչարւած նւեղիան:
Կանայք և աղջկերք սգում էին պատճած ա-
մուսինների և եղայրների վրայ. վաճառականու-
թիւնը կանգ առաւ, ճանապարհները լցւեցին
աւաղակներով:

Քրիստիանը սպառնում էր և ղարհուրեց-
նում... Բայց 'ի զուր՝ քանի շատ էր ձնշում,
այնքան աւելի էր զրգում նւեղիներին և նր-
ուոնք պատրաստում էին վրէժինդիր լինել
իրանց եղբայրների համար: Բոլորն էլ զրգու-
ած էին, բայց ոչ ոք չեր համարձակում սկը-
սել բոլորը սարսափում էին... .

Վրէժը քանի զնում մեծանում էր, սակայն
գեռ ծածկւած էր լուսութեան մէջ... Քրիստիա-
նը սարսափեցրել էր ժողովրդին... .

II.

Միլորեան սարերի տռաջ տարածւում էր
ուղիղ անսահման հոմիա. ծածկւած կանաչ
խոսով. աեղ-աեղ բարձրանում են անտառապատ
բլուրներ. հեռւում երեւում է Հոկալեան լիճը,
որի մէջ խորհրդաւոր կերպով ցոլանում էին
լուսինը և աստղերը: Ամեն տեղ տիրում էր
խորին լուսութիւն:

Գիշեր էր: Լուսինը պայծառ կերպով լու-
սուորում էր իր կախարդիչ լսուով ամբողջ

բնութիւնը, լողալով կապոյտ երկնակամարի վրայ: Պապղում էին տստղերը, քնած էր անտառը, թռչունները դագարել էին երգելուց, միայն երբեմն լսում էր չարագուշակ բուի ձայնը և նորից տիրում էր լութիւն:

Յանկարծ լուեցաւ հրացանի ձայն. թնդացին հարեան լեռները և նորա արձագանքը կորաւ հեռւում: Մի բոպէից յետոյ լուեց երկրորդը և մեծ ճանապարհի վրայ երեկոյ 30 տարեկան մի երիտասարդ, հասարակ գիւղացու հագուստով և թաղեայ գտակով. նա բարձրահասակ էր, հսկայակազմ. փայլուն կրակուտ աչքերը արտայացառմ էին ուժեղ կամք և անխախտելի վրացութիւն:

Չնայելով նորա աղքատ հագուստին նա լաւ զինւորուած էր. մի զցի զաշցյն, ցցած գոտիում, մէջքից կտխած հրացանը, երկար նիզակը, որը նա գործ էր ածում փայտի տեղ, տալիս էին նախան ազգող, քաջի տեսք: Նորա հանդէս զալիս էր մի ուրիշ մարդ մօտ 35 տարեկան, նոյնպէս բարձրահասակ, հրացանը ձեռքին, երկար շէկ մազեր, կապոյտ աչքերը նորա

գեմքին տալիս էին աւելի քնքշութիւն, քան թէ քաջութիւն: Նա նոյնպէս հագնւած էր աղքատ՝ հին պատուած կօշիկներ, կոպիտ բաձկուուկի պատուուած վարսիկ՝ ահա նորա բոլոր հագուստը:

— Աս, Տրոյլէ, բարի երեկոյ, ինչպէս Ե՞ս,— հարցրեց երիտասարդը:

— Լաւ եմ: — Ինչպէս զուք ճշտապահ էք. այսօր ուղիղ լուսնի լուսնի է և ես սպասում էի ձեզ լծի մօտ, — սպատասխանեց նորեկը:

— Հը, ինչպէս են զործերը:

— Հարեան զիւղերի ժողովուրդը կը հաւաքւի 4 օրից յետոյ Մարլիի մօտ և կը սպասի ձեզ:

— Եթէ այգակէս է, ուրեմն ժամանակ կորցնել հարկաւոր չէ: Գնանք:

Մի քանի ժամանակ նրանք զնում էին լուսումը: Երկուսն էլ խորասուզւած էին իրանց մաքերի մէջ:

«Խեղձ, անբաղդ հայրենիք, մտածում էր երիտասարդը: «Ինչո՞ւ ես զու այգակէս անբաղդ, ինչով ես զու մեղաւոր, ինչո՞ւ ես լալիս, ինչո՞ւ ես հեկեկում: ինչպէս մի մայր, որ կորցրել է

իր միակ որդուն։ Վեր կաց, քաջալկրուիր, գուէլ ունես խօ յժ, ապիութիւն... Բարձրացիր, յարձակւիր թշնամուզ վրայ... Օ՛հ, խեղճ, անդին հայրենիք... խրախուսիր, յուսա, հաւատա... և... և անշուշտ մի բան կրլինի... .

—Հը, Տրոլլէ, ի՞նչ ես լսել ինչպէս են գործերը ձեզ մօտ,—խօսեց Ճանապարհորդը։

—Օ՛հ, Գուստավ, Գուստավ, Դանիացիք ուժեղ են, զինւորւած են, իսկ մենք... մենք անդէն, անզօր... Նրանք պատերազմում կրծախջախեն մեղ որդերի պէս... .

—Որդերի... էս մենք զէնք չունենք, բայց ունենք քաջ հոպի։ Մեր կանացքը, մեր քոյրերը անզամ Դանիացոց աչքերը գուրս կրառն... . մենք կը կորչմնք, կը մեռնենք, բայց Դանիացոց սորուկները չենք լինի... .

Երկար և տաք խօսում էին նրանք, մինչեւ անհետացան սարերի ետեր։

Նրանցից մէկը Գուստավ Վաղան էր, իսկ միւսը նորա ընկեր Տրոլլէն։

Մի ամբողջ տարի լինելով Քրիստիանի մօտ պատանդ և բոլոր այդ ժամանակ բանտում նըս-

տելով, Գուստավը ոխ պահեց իր սրտում և զանելով յարմար միջոց, նա փախաւ այնուեղից։ Գուստավը թագաւորական յեղից էր. Նվեյխայում նրանք ունեն մեծ կալւածներ, այգիներ, աներ։ Երբ Նվեյխայիք կամեցան ազատւել Դանիացոց հապատակութիւնից, այն ժամանակ նըրունք և նրանց թւում Գուստավի ընտանիքը ընկան հալածմանքի տակ։ Գուստավը ուներ մի գեղեցիկ քոյր, զրա վրայ սիրահարւել էր մի Դանիացի իշխան, որը կարողացաւ տիրել այդ աղջկոն։ Աղջեկը չ'արաւ այդ անպատճութիւնը և իրան սպանեց։ Գուստավի ընտանիքը վճռեց վրէժինպիր լինել և աշխատում էր ամեն կերպ վնասել Դանիացիներին։ Գուստավը իր հայրենիքի և ընտանիքի վրէժը տանից մտածեց։ Հասարակ զիւղացու հագուստով, նա վճռեց վերապառնալ հայրենիք և իր հայրենակիցներին ապատամբեյնել։ Դա մի գժուար գործ էր։ Բոլորը կամենում էին, բոլորը յուղւած էին, պատրաստ էին հայրենիքը պաշտպանել, բայց ոչ ոք բացարձակ չէր համարձակւում զէնք բարձրացնել հարստահարողների դէմ։

Գուստաւը ման էր գալիս զիւղէ-զիւղ, ոգե-
ւորում էր, համոզում զիւղացիներին զէնք բարձ-
րացնել իրանց տանջանքների դէմ, բայց ժողո-
վուրդը կասկածանքով էր նայում ոգեսորւած
երիտասարդի վրայ: Կարւածատէրերը և շահա-
սականները վախենում էին, որ իրանց հողերը,
տները կը յափշտակեն, ընտանիքը չի ունենայ
ոչինչ ուտելու և վերջապէս որ չեն կարող ո-
չինչ անել: Խամիկ ժողովուրդը թագաւորի ա-
նունը լսելիս գողում էր, աս նորան վախեցրէլ
էր... Բայց երբ Գուստաւը սկսեց պատմել թէ
ի՞նչ պատճի, ինչպի՞սի մահի են ենթարկում
Շւեդացոյ յայտնի անձինքը, կանչում էր հայ-
րենիքի ազատութեան համար, յորդորում էր
վերցնել հրացան, գաշցն... Նորա կրակոտ, ազդու-
մառը, վստահ դէմքը՝ ազդում էին բոլորի վրայ...
Շւեդիայի բոլոր կողմերում սկսեցին բարձրանալ
բողոքներ, աղաղակներ: Գուստավին չետեցին
ուրիշ երիտասարդներ, որոնց նա էր զրգուել:

Գուստավի փառքը քանի զնում մեծանում
էր: Նորան ծանաչում էին բոլորը, հաւատում
էին նորա զրաւիչ խօսքերին:

Քրիստիանը լսեց եռանդքու երիտասարդի մա-
սին և հրամայեց նորան բանել, նշանակելով
վարձատրութիւն այն մարդուն, որը կը քանի
նորան: Թագաւորը լսել էր, որ Գուստավը փախ-
չելով Դանիայից, ման է գալիս և ազստամ-
բեցնում է ժողովուրդը:

Ժողովուրդի արտունջը, ընդհանուր զրգուումը
նորան անհանդապացնում էր. . .

Թագաւորը հրամայեց ամեն տեղ կանգնե-
ցնել զինւորներ, պահապաններ, որոնք հետա-
մուտ լինելով Գուստավին, պիտի բռնէին նո-
րան: Շատ չարչարեց, տանջւեց խեղճ երիտա-
սարդը: Մի անգամ զիշերում էր մի Շւեդական
զիւղում: Նորանից ոչ հեռու զտնում էին
զամիացի պահապանները, որոնք հետամուտ
էին եղել Գուստավին:

Պահապաններից մէկը Շւեդացու շորեւով,
ծածուկ մանում է զիւղը և հարց ու փորձով
իմանում է, որ Գուստավը զիշերում էր զիւ-
ղում:

Վերցնելով իր հետ երկու բնկեր դինու որներ,
զնում է զէպի այն տունը, որանց զիշերում էր

Գուստաւը և կամաց-կամաց մանում է սենեակը:
Գուստաւը չկորցնելով իր անվեհերութիւնը,
բարեռում է նրանց: Զինւորները՝ որսնք չկին
դիմել բոլորովին Գուստաւին, մանելով սենեա-
կը կասկածանքով նայեցին Գուստավի վրայ և
հարցրին տանտիրոջը: Գուստավը զուրս զբ-
նաց, իբրև կանչելու: Սենեակից զուրս գալով,
նու փակեց զուռը և սկսեց կանչել զիւզացի-
ներին, վրէժինդրութիւններով վասւած դէպի
իրանց չարչարդները, նա վերցրեց մի խռափ
կապոց, վասեց ու մօտեցրեց խրձիթին, զին-
ւորները վազում էին անկիւնից անկիւն, զթու-
թիւն խնդրելով նրանք իրանց կորած էին հա-
մալում կրակի մէջ, կարծելով թէ Գուստավը
կրակի է խրձիթը: Գուստավը կամենում էր
առաջ այրել խրձիթը և խեղդել զինւորներին
ծուխի մէջ, բայց խղճարով նրանց վրայ, նա
միայն զինաթափ արեց նրանց, և թողեց զիւ-
զից ոչ հեռու, իսկ ինքը շատպեց անհետանալ:
Բայց զինւորներից մէկը կարողացաւ արձակել
պարանը և իմացնել ընկերներին:

Ազմուկ բարձրացաւ բոլոր շրջակայքում.

2039

Դանիացոց զինւորները ոտի էին կանգնած: Շտա-
պեցին շրջապատել զիւզը և ոչ ոքին դուրս
չթողնել այնաեղից: Գիւզացիները՝ զրգուելով
պատահածից, զինւորւեցին ով ինչով կարողա-
ցաւ և պատրաստեցին պաշտպանել . . .

Դանիացիք վերջապէս գտան Գուստավի հեռ-
քը և շրջապատեցին այն զիւզը, որտեղ թագ-
նւոծ էր նա: Կոտրելով զուռը ահսան Գուս-
տավին հանգիսա կանգնած սենեակի մէջ ահ-
զում, մերկացրած գաշոյնով: Դանիացիք յար-
ձակեցան նորա վրայ: Բայց վրայ հասան զիւ-
զացիք. սկսեց պատերազմը: Դանիացիք ան-
խրդութեամբ կոտորում էին: Գուստավը չը
կորցրեց իրան: Նեկացիք կուռում էին մինչեւ
արեան վերջին կաթիլը... Անցաւ քառորդ ժամ:
կուռում էին թէ խրձիթում, թէ դուրսը:

Նեկացիք յաղթեցին: Դանիացիներից 12
հոգի սպանւած էին, շատերը վերաւորւած, իսկ
մի քանիսը կարողացան փախչել: Փախչողները
շտապեցին հարեան Դանիացոց պահակատեղին
և ձի նստած պնդեցին Գուստավի ևտեից:

Գուստավը թագնելով նրանցից անցնում

Էր անտառով, երբ պատահմամբ աւեստւ մի խոտով բարձւած սայլը Զինւորները մօտենում էին: Նա շուտով բարձրացաւ սայլը և պահւեց խոտի դէզի մէջ: Յանկարծ անտառից դուրս եկան Դանիացիք և իրանց սուր նիզակներով սկսեցին ծակծկել խոտը. նոցանից մէկը վիրաւորեց Գուստավի ուղը, բայց ամենեին ձայն չ'հանեց:

Անցնելով այզպէս գիւղեց գիւղը Գուստավը գրգռում էր ժողովուրդը... Փայտ, մահակ, շատ շատ գաշջին՝ ահա գիւղացու վէնքը: Բայց հոգատէրերը, վաճառականները օգնութեան հասան իրանց եղայրներին: Ամեն կողմից ուղարկում էին փող, զէնք... Բարձր զասի պատկանող կանայքը գնում էին գիւղեր հոգալու վիրաւորւածներին, շնուռմ էին հիւանդանոցներ... .

Գուստավը հաւաքում էր խմբեր, կազմում գնդեր, բաժանում զէնք: Ոգենորւած գիւղացիները տեղ-տեղ արդէն հարկ տալուց հրաժարւել էին, ընդդիմանում էին Դանիացիներին, պատերազմում նրանց հետ. Գուստավը պատերազմում էր, առաջնորդելով անվորձ խմբին,

որ զինւորւած էր միայն երկար նիվակներով, մահակներով, սրերով և նետերով: Բայց Շւեդացոց հերոսը կարծ ժամանակում կարողացաւ զիւղացիներից, լեռնատկաններից և բանւորներից կազմակերպել կանոնաւոր զօրք:

Շւեդները փառաբանում էին Գուստավին ինչպէս Աստուծոյ: Ոչ ձիւնը, ոչ սառնամանիքը, ոչ յուրաը չէին կանգնեցնում Գուստավին. Նա իր ժամանակին երկում էր տմեն տեղ և իր կրտկոտ ձառերով, խելօք խորհրդներով օգնում և սովորյնում էր Շւեդներին: Շատ տանջանք, շատ լոկանք տարաւ նա, նրան քաջալերում էր միայն մի գաղափար, մի միագ՝ այն է աղատել Շւեդիան, իր հայրենիքը... . Նա անձնատուր էր եղել նորան, նա սիրում էր նորան, որպէս իր հարազատ մօրը... .

Ոգենորութիւնը հասել էր այն աստիճանին, որ Շւեդիսյում կազմակերպւեցաւ 13—15 տարեկան երեխաներից մի գունդ, որը զինւորւած էր նիզակներով, փայտերով: Այդ գունդը յարձակում էր Դանիացոց զինւորների վրայ, աւարում էր նրանց պաշտիները, զէնքերը... .

Եւ յետ էր դառնում կրկին իր բնակառեղին:
Գիւղերում կաղմում էին աօնախմբութիւններ. այդ աօնախմբութիւնների ժամանակ ծերերը օրհնում և քաջերում էին երիասարդներին, գնալ հայրենիքը պաշտպանելու. . .

Պատրաստում էր փոթորիկ. ապատամբութիւնը դեռ կամաց-կամաց, բայց խուլ գղոզնով ճարակում էր ամբողջ Շեղիային... Յանկարծ թնդաց որոշը և ականց փոթորիկ փայլով, ահով, կայծակով. . .

Եւ որը կը յաղթի. . .
Մանգաղը և ոգեղութեմինը, թէ հրացանը և ցմը.. Բոլորը յըս ունէին, բոլորը սպասում էին. բայց ոչ ոք հաստատ պատասխան տալ չէր կարող. . .

III.

Այդ ժամանակ Դանիայում նշյալքս Դանիացիք անբաւական էին Քրիստիանից. Այլշափ ագահութիւն, անարդարութիւն, հալածումն, անշանքը՝ համբերութիւնից հանեցին մինչեւ

անգամ Դանիացիներին. Սրանք սկսեցին մտածել մի կերպ աղաւել ատելի թագաւորից. Նրանք կամենում էին զահ բարձրացնել ուրիշին, բայց չէին համարձակում. Քրիստիանն զեռ հաստատ էր իր զահի վրայ. . .

Դուստաւը շաապում էր իր ուղեկիցների հետ գէպի Մարու գիւղաքաղաքը, որտեղ նշանակւած էր զլստոր, վճռական, վերջին ժողովը. Ժողովը պիտի կայանար կիւրակէ օքը, երբ արել մայր մօնէր. Դեռ Շ վերանայափ տարածութեան էր, երբ արեգակը սկսեց մայր մօնել ծանապարհորդները ձիով չին վնամ: Մայր մօնող արեգակը իր վերջին ճառապայմներով լուսաւորում էր շօջակայքը:

Դուստաւը խորասուցած էր իր մաքերում, նորա գէմքը արայայտամը էր ախտութիւն, երբեմն յուստահասութիւն, բայց միենցն ժամանակ և վսեմութիւն: Նա բաժանուում էր այն բոլորից, ինչ որ նորա համար առենաթանկագինն էր, բայց նա իրան նւիրել էր իր հայրենիքին:

«Ներիր, մայրիկ, ներիր, քոյրիկս, ներիր և դու

ամբողջ աշխարհ. ես ձեզ չեմ պատկանում, ես քոնն եմ, քոյր, սիրելի հայրենիք, անդին Շվեյցարա, վելցրու ինձ, արա ինձ հետ, ինչ կամունում ես. . .

Գուստաւ, — գարձու նորան Տրոլլէն, — չեմ թւում քեզ երեմն, որ յիրաւի մենք շատ թոյլ ենք, որ մեր յոյսերը միայն լոկ յոյսեր են, իսկ հետևանքը՝ ոչինչ կըլինի. . .

Ամօթ քեզ Տրոլլէ, եթէ մենք յուսահատւենք, ուրեմն այն ժամանակ ի՞նչ պիտի անէ ժողովուրդը, ամբոխը: Ամօթէ, քաջալերւիր, — արտասանեց Գուստաւը և խոնարհեցրեց զուխը: Տիուր վշտալի մաքերը ճնշում էին նորասիրար. . .

Յանիարծ նորա գէմքը պարզւեց:

— Իէ, շուտ, ուշանում ենք... — բացականեց նա և մտրակեց ձիուն:

Նրանք բարձրացան սարի զլուխը. նրա ստորառառում տարածւում էր Մարու և Վետիչի փոքրիկ քաղաքը: Լեռների վրայ հաւաքւել էին մօտ 4000 քաղաքացիք, զիւղացիք և հողերականներ: Մարու, Շվեյցարի այդ փոքրիկ քա-

զաքը, կարծես, այսօր հոգի էր ստացել: Քաղաքի շուրջը ցիր ու ցան վրաններ էին զետեղւած: ամեն տեղ կրակ էին արել, կերակուր էին պատրաստում, երգում, պարում էին. . .

Արեգակը բոլորովին մայր մտաւ: Երկրի վրայ պատեց խաւարը:

Գուստավը արագ իջաւ սարից. նորան շրջապատեցին ամենքը և հանդիսավ ստաջնորդեցին գէպի այն առնը, որուղ պիտի կայտնար վերջին ժողովը:

Գուստավը տուն մանելու պէս, բոլոր ներկայ եղողները ոտի կանգնեցին, ողջունեցին խնդալից աղաղակներով և երկար անդադար կէցցէներով. . .

— Եղբարք, — խօսեց Գուստավը դողդոջուն ձայնով, — այսօր մենք հաւաքւում ենք այտեղ վերջին անգամ: Դուք զիակք մեր հաւաքւելու պատճառը: Դանիացիք հեռու չեն. նրանք շատ են, զինւորւած են... եթէ ոչ այսօր՝ վաղը, կամ միւս օրը նրանք այստեղ կըլինեն... Մենք կարող ենք և պիտի պաշտպանենք... Հաւաքւենք սուրբ Շվեյցարի դրօշակի տուկ և յետ մղենք նղւոված Դանիացիներին, պատերազմենք միա-

բան կերպով և մեր վերջին շունչը չը խնայենք,
իսկ յետոյ թող Աստւած աջողացնի... Եկէք
մեր պարաքը, մեր սուրբ պարաքը կատարենք...
Դուք, իւլսաննե՞ր, դուք, զիւղացիք, զինաւոր-
ւեցէք կուսակից եղէք, վերցրէք թրեր ու զր-
նանք, գնանք յառաջ քանի ուշ չէ, քանի
յոյս կայ... Կեցցէ մեր սուրբ, անբաղդ հայրե-
նիք, կեցցէ անդին Շվեդիան.
Նա այլ և չ'կարողացաւ շարունակել և ար-
տասւեց... .

Հազարաւոր անվերջանալի տղաղակներ եղան
նորա պատասխանիք: Ամբոխը զոռում էր, բո-
լորը սպասում էին, բոլորը ոգեսորւած էին:

Սյդ օրւայ ժողովս վճռեց զօրքի հրամանա-
ար նշանակել Գուստավ Վաղային: Այսաեղ
նցինդէս վճռեց նշանակել նորան թագուոր,
ապագայ անկախ Շվեդիայի: Նշանակեցին նորան
և երկու օգնուկան՝ նորա երկու բարեկամներին՝
Տրոլլէին և Պետրոս Ավենասոնին:

Գուստավը գնաց Դանիացոց դէմ 5000 հոգի
հետևակներով և մի քանի տասնեակ հեծելա-
զօրքով:

Հանդիպելով Դանիացիներին մի դիւղի մօտ,
Գուստավը վճռեց սկսել պատերազմը, որը պի-
տի լինէր վերջինը և վճռողականը:

Վաղ առաւօտ, երբ Գուստավը արթնացաւ,
իսկոյն բարձրացաւ տեղից և ման եկաւ բոլոր
զինաւորների շուրջը, յորդարեց նրանց և խրա-
խուսեց:

Ոռաւօտեան ժամը 9-ին նա իր զօրքը առաջ
առարտ:

Պատերազմը սկսեց: Շվեդները կռւում էին
որպէս առիւծներ... Գուստավը ամեն տեղ էր,
օգնում էր նորան, որը վատանդի մէջ էր լինում:
յորդորում էր զինաւորներին, երբ տեսնում էր,
որ նրանք յուսահատում են. նորա թուրը
բարձրացնում էր, որ թոյնէ Դանիացու դուխը...

«Կեցցէ հայրենիք, կեցցէ Շվեդիայ», աղաղա-
կում էին Շվեդները և նոր ուժով յարձակ-
ում թշնամու վրայ. . . Նւազ էր Շվեդացոց
շյժը: Շատ քաջեր լնկան այստեղ: Դանիայիք
դեռ հաստատ էին:

— Կեցցէ Գուստավ, — լսեց յանկարծ սարի
յետեից և կայծակի արագութեամբ Շվեդացոց

թարմ ձիաւորները յարձակեցան թշնամու վրայ... Մէկ հարւած, մէկ ընդհարումն և Դանիացիք փախան. . .

«Կեցցէ՛ Գուստավ», — լուեցին հաղարաւոր ձայներ:

Նվերները յաղթեցին:

Կուից յեայ Գուստավը շրջեց պատերազմի դաշտը, ուր շատ քաջեր էին ընկել և շատերը վերաւորւել... Գուստավը հաւաքեց նրանց դիակները, յանձնեց նրանց հօղին և թարմ գերեղմանի վրայ դրեց մի հասարակ խաչ որի վրայ փորազրւած էր հեաւեալը.

«ՄԵՌԱՆ ՀԱՅՐԵՆԻՔԻ ՀԱՄԱՐ» . . .

Գուստավը իր զօրքը տարաւ առաջ և համարեա ոչինչ արգելքի չհանդիպեց նրանց ձանապարհին: Նա մօտեցաւ նվեղիայի մայրաքաղաք Ստոկհոլմին և պաշարեց նրան: Դանիացիք Ստոկհոլմում թողել էին զինւորների մի գունդ, վախենալով, որ մի զուցէ նվեղացիք գրաւեն նրան: Նվեղները Ստոկհոլմի պատերի տակ մնացին ամբողջ երկու տարի:

Այդ ժամանակ Թրիստիանը Դանիայում անաջողութեան մէջ էր: Ժողովուրդը զրդուած էր նորա գէմ: Նորա լաւ քաջ սպաները (օֆիցիերները) հեռացան նորա զօրքից և միացան Գուստավի զօրքին:

Գուստավը մեծ շուքով մտաւ Ստոկհոլմ, թագաղըւեց և դարձաւ նվեղացոց թագաւոր:

Իրանք Դանիացիք իսկ զարմացան նվեղիացոց հերոսական ինքնապաշտպանութեան և հաստատամտութեան վրայ: Նրանք և ամբողջ Եւրոպան սկսեցին պատել այդ ժողովրդին, որը կարողացաւ պաշտպանել իրան, իր հայրենիքը. . .

Ազատ շունչ առաւ նվեղիան. . .

Գուստավը հոգ էր աանում այնուշեակ իր ժողովրդի վրայ, ինչպէս հայր: Նինում էր հետանդանոցներ, ապաստարաններ, ուսումնարաններ, նոր ճանապարհներ, օրինաւոր արդար զատաստան, ժողովրդին ազատել ծանր հարկերից և տուրքերից: Եւ ժողովուրդը սիրում ու փառաբանում էր նրան: Գուստավը չմոռացաւ նրանց, որոնք օդնել էին իրան նվեղիայի վատ,

անբաղդ օրերում: Բոլորին պարգևեց հողեր և փողով վարձատրեց նոյնպէս այն ծեր մարդուն,
որը նրան ծածկել էր խոսում սայլի մէջ... .

Գուստաւը ապրեց մինչեւ 70 տարեկան հասակը և մեռաւ սիրած ու յարգւած ժողովը դից. նորա յիշատակը մինչեւ այսօր ապրում է ժողովը մէջ. ժողովուրդը փառաբանում է իր երգերում իր մայր Շւեդիայի հոչակաւոր որդուն:

Այդ ժամանակ Դանիայում մեծ փոփոխութիւններ եղան. Դանիայիք չ'կարողանալով տանել Քրիստիանի կառավարութիւնը, զրկեցին նրան գահից և նորա տեղ բարձրացրին ուրիշին (Ֆրէդէրիկոսին): Քրիստիանը փորձեց մի քանի անդամ վերադառնալ դէպի գահը: Բայց 'ի գուրք: Նորա անունը կորաւ ժողովրդի յիշողութիւնից և մի-մի անդամ միայն երկրագործը դաշտում վարույցանքի ժամանակ մնարեցրում է իր սպազերին և անէծքով յիշում է իբրև «իմի ծնունդ և սատանայի որդի» Քրիստիան բռնակալին:

Դանիայի բանտերից մինում մի առանձին խցում պարկած էր թագ յատակի վրայ նի-

հար, գեղնած, զաղանային դէմքով մի կալանաւոր: Նորա զլխի տակ դրած էր պարզի մի կոյտ, իսկ ոտների մօտ երկու կտոր ուեւ չոր հաց և մի կոտրած ամանում քիչ ջուր: Նորա ոտները շղթայտն էին և շղթաները թնդում էին, կալանաւորի ամեն մի շարժմանկից: Նորա կրնճուած, չար դէմքը, անզօր, անորոշ հայեացքը, պղտոր աչքերը, ալեոր զլուխը ցոյց էին տալիս, որ այդ մարդը շատ է տարել, շատ է համբերել իր ամբողջ կեանքումը... .

Յունիս ամսւաց պայծառ առաւօտ էր, բայց կալանաւորը պյու չէր իմանում Օրը, զիշերը նորա համար միենցն էր: Ճրազը իծ աղօտ լցով հազիւ լուսաւորում էր խուցը: Արեգակի ծառադայթները երբէք չէին թափնացում այնտեղ:

Կալանաւորը արթնացաւ վաղ առաւօտեան և նայեց չար հայեացքով իր շուրջը, խցում ոչ ոք չ'կար. նա իր տխուր զլուխը խօնարհեցրեց կրծքի վրայ և ընկաւ իւր մաածմունքների մէջ:

Այդ ժամանակ խուցը մտաւ մի անձունի

թղուկ՝ չար վայրենի գէմքով։ Դնելով կալանաւորի ոտքերի տակ մի կտոր հաց, նա կամենում էր դուրս գնալ։

— Սպասի՛ր, Պետրոս, — խնդրեց կալանաւորը, — ես խմել եմ ուզում, — մի քիչ ջուր տուր ինձ։

— Լոիր, ծեր շուն, սատկիր, — փսփսաց թղուկը և դուրս գնաց խցից։

Կալանաւորը կրծտեց ստամերը և վայրենաբար դոչեց։

— Պետրոս, Պետրոս։

— Լոիր... չա, հա, հա... պատասխանեց զբարսից թղուկը։

Լոեց կալանաւորը, միայն լսում էր թղուկի քայլերի ձայնը, վերջապէս սա էլ հանդարտւեց և տիրեց խորին լոռութիւն։

Կալանաւորը նստելով իր տեղում, կամենում էր ջուրը վերցնել, աշխատում էր, թեքւում էր, բայց չէր կարողանում հասնել ջրին և թուլացած յանկարծ ընկաւ սառը յատակի վրայ և ամբողջ մարմնով դողաց. մի վայրենի, աշոելի ձայն դուրս եկաւ նորա ձնշւած կուրծքից. . .

Մի քանի տարի էլի չարչարւեց խնդր կալանաւորը և վերջապէս մեռաւ... Ոչ ոք չ'ողբաց նորա վրայ, ոչ ոք չ'սպաց, ոչ ոք չ'նկատեց, չ'իմացաւ նորա մահւան մասին։

Դա Դանիացոց թագաւոր Քրիստիան Բ էր։



ով Երեք ու պայման այս հայոց մէջ մէջ
ու զ ու մ առանձին ակրածութիւն և պատճեաց
այս ու չ այս ու այս ու այս ու այս ու այս
այս ու այս ու այս ու այս ու այս ու այս

Զ Վ Ա Բ

ԳԻՆՆ Ե 5 ԿԱՊ.

ՀՀ Ազգային գրադարան



NL0242307

